ՍԱԼՈՒՏ

Վարչական ղեկավար՝ Մինաս Խաչատրյան

Հեռ: 094 39 94 70

Մակերես՝ 5.5 կմ²

Բնակչություն՝ 102

Ինդեքս՝ 2808

an.khachatryan98@mail.ru

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սալուտ գյուղական համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիսարևմտյան մասում: Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի Սալուտ համայնքը ձևավորվել է 1860թ. Դալբանդ գյուղից գաղթած գաղթականների կողմից: Համայնքն ունի եկեղեցի, որը կառուցվել է 1860թ: 1988թ. Երկրաշարժից հետո համայնքը վերակառուցվել է ՌԻկրանիայի Վիննիցայի մարզի շինարարների կողմից: Համայնքի կենտրոնի հեռավորությունը մայրաքաղաքից 180 կմ է, մարզկենտրոնից՝ 32կմ, շրջկենտրոնից՝15 կմ: Համայնքը գտնվում է բարձր լեռնային գատում՝ բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2080մ է: Համայնքի վարչական տարածքը

կազմում է 553 հա: 2013թ. հունվարի 1-ի տվյալներով համայնքում բնակվումեն 86 մարդ, ունի 19 տնտեսություն, համայնքի բնակչությունը պատկանում է հայ առաքելական լուսավորչական եկեղեցուն: Գյուղը չունի միջնակարգ դպրոց երեխաները մինչև 3-րդ դասարան են հաճախում գյուղի դպրոցը՝ 4-րդ դասարանից հիմնական մասը հաճախում է նույն տարածաշրջանի Մուսայելյանի միջնակարգ դպրոցը: